Հովհաննես Թումանյան

Աղջկա սիրտը

(Արևելյան ավանդություն)

Հին արևելքում, մի հին քաղաքում
Ժուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում:
Հարուստ էր հերը զալում սիրունի,
Անհուն գանձի տեր ու շատ անվանի:

Բայց սիրո համար խեղճ ու շեն չըկան.
Մի աղքատ տըղա սիրեց աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրեց կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
Կա թե չըկա,

Նա է, որ նա...

ՉԷ՛, որ չէ՛, կանչեց ծընողը փարթամ,
Իմ աղջիկն, ասավ, սև հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ ես:
Ասավ ու կանգնեց էն լեռ քարի պես:

Բայց սիրո համար քար ու սար չըկան.
Սիրում էր գըժված տըղեն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,

Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
Կա թե չկա,

Նա է, որ նա...

Սաստիկ բարկացավ հարուստն անկոտրում,
Փակեց աղջկան մեծ աշտարակում
Իր սիրած տղից ու կյանքից հեռու.
Թող էապես, ասավ, մոռնան իրարու:

Բայց սիրո համար փակ ու բանտ չկան.
Սիրում էր անվերջ տղեն աղջկան,
Աղջիկն էլ նրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
Կա թե չկա,

Նա է, որ նա...

Տեսավ իր ձեռքին ոչ մի ճար չկար,
Համառ հարուստը հերսից խելագար,
Իրեն աննման զավակը միջին,
Կըրակի մատնեց աշտարակն էն հին:

Բայց սերը որտեղ հըրդեհ է ձըգել,
Ի՞նչ անի էնտեղ հըրդեհը մեկ էլ:
Ու թեժ բոցերի սաստկության միջում
Աղջիկն՝ էրվելով ճըչում էր, կանչում.
Կա թե չկա,

Նա է, որ նա...

Ու էրվեց հիմքից աշտարակն ահեղ,
Էրվեց նըրա հետ էն սիրունն անմեղ.
Հող-մոխիր դարձավ: Իր սիրտը մենակ

Չէրվեց հրաշքով ու սառ մոխրի տակ

Մընաց կենդանի... էն մոխրի վրրեն
Արտասուք թափեց սիրահար տրղեն
Ու կորա՛վ, գնաց, հեռո՛ւ, շատ հեռու,
Իր օրը լալու, նրրան փընտրելու,
Մենա՛կ, օտա՛ր,

Անմրխիթար...
Ո՛վ քրնքուշ գաղտնիք, ո՛վ սիրուն հրաշք.
Էրված աղջրկա սիրտը մոխրի տակ,
Իրեն մոխրի տակ կենդանի էր դեռ
Ոչ ոք չրգիտեր, ոչ ոք չրգիտեր...

Ժամանակ անցավ էս տրխուր դեպքից,
Արցունքով թրրջված էն մոխրի տակից,
Էն միշտ կենդանի սրրտից թրրթրռուն
Բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն,
Կարմի՛ր, թեթև՛,

Բայց... սիրտը սև...

Սրգավոր տրղան հուսահատ, թրշվառ
Շրրջում էր մոլոր աշխարհից աշխար,
Չէր գրտնում սակայն կյանքում էլ նրրան,
Ամեն տեղ վիշտն էր սիրածի մահվան,

Որ հար, թե՛ զարթուն, թե՛ քրնի միջում.
Տանջում էր նրրան, անդադար տանջում:
Բայց սիրո համար վերջ ու մահ չրկան,
Տրղի հառաչքը հասավ աղջրկան
Անմահ կյանքում

Էն աշխարհքում:

Հասավ, ու շարժված, կարոտ, կարեկից,
Թրռավ աղջիկը անմեռ աշխարհքից,
Սիրով ու բույրով, թարմ, անուշահոտ,
Երազով եկավ սիրած տղի մոտ:

Լըսիր, իմ սըգվոր, լսի՛ր ինձ, ասավ.
Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ,
Ու էն ծաղկի մեջ իմ սիրտն է, որ կա,
Կարոտ, խենթ սիրտը ջահել աղջըկա
Լիքը սիրով,

Երազներով...

Ուժ ունի իր մեջ նա կախարդական
Ու քաղցր արբեցում էնքա՜ն ու էնքա՜ն...
Քամիր ու խըմիր ուժը էն ծաղկի,
Նա քեզ կըփըրկի, նա քեզ կըփըրկի...

Մոռացնել կըտա իմ հուր սերն ու ինձ,
Հեռու կըտանի էդ կոպիտ կյանքից,
Ու կապրես անվիշտ և զըվարթ հոգով,
Կըխնդաս ընդմիշտ անթառամ կյանքով
Ազատ հեռվում,

Երազներում...

Ո՜վ սիրուն հըրաշք, ո՜վ քնքուշ գաղտնիք.
Տըղան էն օրից դարձավ երջանիկ:
Հարբած նվիրական էն ծաղկի ուժով,
Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,

Իրեն երբեմնի վիշտը մոռացած,
Էս կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած,
Ապրում էր ուրախ, ճոխ վայելքներով.
Լե՜ն ու լի սրրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռվո՜ւմ

Երազներում...

1913